

ՈՒՍՍԱՒՈՐԻՉ

ԿԵՂԵՑԻՆ ՏԱՆ ՄԷՋ



Բ. ՏՄԻ ԹԻ 1
ԴԵԿՏԵՄԲԵՐ
December | Décembre
Year 2 | Année 2
No 1 2017

ԱՌԱՋՆՈՐԴԻ ԽՕՍՔ



ԲԱԲԳԷՆ ԱՐԹԵՊԻՍԿՈՊՈՍ Առաջնորդ՝ Գանատայի Հայոց Թեմի

ՄԱՐԴԸ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԸՄԲՈՆՈՒՄՈՎ

Ի՞նչ է մարդը: Ո՞վ է մարդը: Ո՞վ է այս արարածը, որ կը պարծենայ իր նուաճումներով ու յաղթանակներով, սակայն եւ այնպէս տակաւին կը վախնայ ինքնիրմէ: Աստուածաշունչ մատենը կ'ըսէ, թէ Աստուած ստեղծեց մարդը: Աստուածաշնչական այս խօսքը՝ մարդը մեծ պարտաւորութեան տակ կը դնէ, թէ՛ մարդ արարածը ոչնչութիւն է առանց Աստուծոյ:

Առանձին, մարդը նման է դաշտի խոտին, անցնող հովին, ան ցաւերու եւ տառապանքներու խուրձ մըն է: Այո՛, մարդ արարածը «կախեալ անձնաւորութիւն» է: Ան կախեալ է Աստուծմէ եւ այդ պատճառով միշտ պատրաստ է ըմբոստանալու Անոր դէմ: Ապստամբ այս ոգին է, որ մարդը կ'իջեցնէ ստեղծագործութեան ամենէն ստորին խաւերուն, իսկ ընդհանրապէս իր մեղքի ճանաչումը զինք կը բարձրացնէ աստուածային բարձունքներուն:

Այն գաղափարը, թէ մարդը ստեղծուած է Աստուծմէ եւ «Աստուծոյ պատկերին համաձայն», մեզ կ'առաջնորդէ երեք հիմնական մտածումներու.-

- ա) Աստուած խոնարհեցաւ եւ յայտնուեցաւ իր մարդկային բնութեամբ:
- բ) Աստուած «մեր Հայրն է»:
- գ) Մարդը արժէք է՝ յարաբերաբար Աստուծոյ:

Մարդուն այս կախեալ արժէքը զինք կը դնէ մեղքի աւելի խոր գիտակցութեան պարտաւորութեան տակ. մարդը պատասխանատու է իր գործած մեղքերուն համար, եւ հետեւաբար, իր մեղանչական տկարութիւնը տեսապէս պէտք է յիշեցնէ իրեն Աստուծմէ կախեալ ըլլալը: Մեղաւոր մարդուն համար ներկայ կեանքը տանելի կ'ըլլայ միայն աստուածային ողորմութեամբ: Աստուծոյ ողորմութիւնը յայտնուեցաւ նոյնինքն Յիսուս Քրիստոսի մարդեղացումով եւ մարդուն մէջ բնակուելով: Այնուհետեւ, ոչ մէկ մահկանացու արհամարհուած չէ, որքան ալ ան մեղաւոր ըլլայ, որովհետեւ Աստուածորդին մեղաւոր մարդուն համար փրկագին վճարեց Իր իսկ խաչելութեամբ:

Մեղքին պատճառով պղծուած էր «Աստուծոյ նմանութիւնը» մարդուն մէջ, որ սակայն Քրիստոսի խաչելութեամբ կրկին անգամ վերանորոգուեցաւ ու վերահաստատուեցաւ մարդուն մէջ:

Այո՛, ՄԱՐԴ ԱՐԱՐԱԾԸ ՈՉՆՉՈՒԹԻՒՆ Է ԱՌԱՋ ԱՍՏՈՒԾՈՅ:



ԴԱՍԵՐ՝ ՃՇՄԱՐԻՑ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԿԵԱՆՔ ԱՊՐԵՆՈՒ ՀԱՄԱՐ

Ինչպէս որ ճնճողուկին մէկ ոտքը միայն թակարդի մէջ բռնուելով ան կը կործանի, նոյնպէս դուն եւս, երբ մեղք կը գործես անով սատանային ձեռքը կ'իյնաս: Բոլոր ախտերն ալ միեւնոյն ժամանակ չեն նեղացներ մեզ, ինչ որ Աստուծոյ սիրոյ արդիւնքն է, որպէսզի դժուար չըլլայ անոնց դիմադրել: Իրապէս որ ծոյլ ենք, չենք կրնար յաղթել մէկ առ մէկ բոլոր ախտերուն, որոնք իրարմէ տարբեր ժամանակներուն կը յայտնուին եւ տարիքի հետ կ'անցնին:

Դուն քեզի այնպէս ցոյց մի տար, որպէս թէ դուն բարի եւ կամ ուղղութիւն տուող, այլ իբրեւ օգնող եղբայր:

Եթէ մէկը պիտի համբերէ, միայն այն ժամանակ երբ գրգռող մը չկայ, գազաններէն ինչո՞վ կը տարբերի. անոնք եւս միշտ չեն կատարիր, այլ միայն երբ նեղի մատնուին:

Ինչպէս որ երբ հողը չմշակենք, չցանենք ու չսերմանենք, զանազան տեսակի փուշեր ու խոտեր կը բուսնին, նոյնն է նաեւ պարագան մարդուն. ան բնութեամբ գործունէայ ըլլալով, երբ բարիք չգործէ, բնականաբար չարիք կ'ընէ:

Բարսեղ Մաշկեւորցի

ՃԻՇՏԸ ԳԻՏԱՍՆՔ


Ի՞նչ է խունկը եւ ինչո՞ւ խունկ ծխել

Խունկ ծխելը զուտ քրիստոնէական երեւոյթ չէ. քրիստոնէութենէ առաջ ալ զանազան կրօններու մէջ խունկը կը գործածուէր բարեպաշտական կեանքի արտայայտութիւն որպէս: Այսօր եւս ուրիշ կրօններ խունկը կը գործածեն նոյն նպատակով:

Քրիստոնէական Եկեղեցոյ կեանքին մէջ ալ վաղուց խունկը սկսաւ գործածուիլ զանազան նպատակներով. Եկեղեցոյ մէջ հաւասարապէս կը խնկարկուին խորանն ու Մեղանք, սուրբերու պատկերներն ու սրբագործուած իրերը, կրօնատարներն ու աշխարհականները մեծ թէ փոքր: Այս խնկարկութեան նպատակն է ամէն ինչ որ Աստուծոյ տան մէջ կը գտնուի սրբել, մաքրել, յարդարել Տիրոջ համար ու ապա Անոր ընծայել: Երկրորդ խունկը մեղքերու թողութեան համար մատուցուած զոհ մըն է, ինչպէս որ Հին Ուխտին մէջ կը տեսնենք անոր գործածութիւնը նոյն նպատակով:


Երրորդ խունկին վեր բարձրացող անուշաբոյր ծուխը ուղիղ եւ բնորոնէլի աղօթքը կը խորհրդանշէ, ինչպէս սաղմոսերգուն կը յայտարարէ. «Ուղիղ եղիցին աղօթք իմ որպէս խունկ, առաջի Քո, Տէր» (Մղ 141.2), այսինքն զգալի խունկին հետ նաեւ մեր հոգիի ծուխը, որպէս մեր սիրոյ աղօթքներուն նշանակ կը բարձրացնենք Քեզի ո՞վ Աստուած: Չորրորդ խունկ ծխելը նաեւ կենցաղական նպատակ ունի, որպէս հականեխիչ անուշահոտ հոտով հականեխելու համար ժողովուրդի հաւաքոյթէն առաջացած ապականած օդը:

Խունկը կը պատրաստուի հոտաւէտ ծառերու խէժերէ: Եկեղեցոյ մէջ խունկ ծխելու պաշտօնեան սարկաւազը կամ ուրարակիւր տիրացուն է:





ՀՈԳԵՒՈՐ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ



ՊԻՍՏՈՒԿԱՆ

Կեանքի մեջ երկու հակոսնեայ, այսինքն հակառակ ուղեքով եւ ուղղութեամբ գացող, իրականութիւններ ու մարդուն իմացականութեան, անոր առօրեայ կեանքին եւ մտածելակերպին վրայ բանեցուած ազդու ուժեր կան, մէկը բարին է, իսկ միւսը չարը:

Բարին, բարութեան աղբիւրէն՝ Աստուծմէ մեզի շնորհուած առաքինութիւն մըն է եւ անոր պատկերէն մասնիկ մը, որովհետեւ կատարեալ բարին Աստուծոյ ինքն է: Մեծահարուստ երիտասարդ մը մօտեցաւ Յիսուսի ու հարցուց անոր. «Բարի՛ Վարդապետ, ի՞նչ պէտք է ընեմ յաւիտեական կեանքը ժառանգելու համար»: Յիսուս ըսաւ անոր. «Ինչո՞ւ զիս բարի կը կոչես: Միայն Աստուծոյ բարի է: Պատուիրանները գիտես «Մի՛ շնար, մի՛ սպաններ, մի՛ գողնար, սուտ վկայութիւն մի՛ տար, ուրիշին իրաւունքը մի՛ յափշտակեր, պատուէ՛ հայրդ ու մայրդ» (Մարկոս 10: 17-19):

Այդ Բարին՝ Աստուծոյ, մեզի շնորհեց բարի կենդանութիւն դրախտին մեջ, սակայն ահա չարը բոյն դրաւ մարդուն մեջ եւ Աստուծոյ մարդկայնութիւնը վերածեց խոր անդունդի:

Հապա ուրկէ՞ ծնաւ չարը, եթէ Աստուծոյ բարին աղբիւրն է ու ամէն ինչի Արարիչը:

Զգո՛յ՛, հպարտութիւնն էր, որ ծնունդ տուաւ չարին, հրեշտակը դարձաւ հրեշ եւ ժառանգ անդունդին տակը, մարդը վտարուեցաւ դրախտէն, որովհետեւ հպարտացաւ եւ ուզեց Աստուծոյ նմանիլ, «Քանզի Աստուծոյ գիտէ, թէ այն օրը որ անկէ ուտէք, աչքերնիդ պիտի բացուի եւ աստուածներու պէս պիտի ըլլաք» (Մանդոց 3:5):

Չարին աղբիւրը մեծամտութիւնն ու հպարտութիւնն է, իսկ խոնարհութիւնը մեզ կ'առաջնորդէ դէպի «Աղբիւրը Լոյսին», մեր հոգիին, մեր ինքնութեան, մեր հարազատ եսին, որն է Աստուծոյ պատկերը մեր մեջ:

Ո՛վ որ խոնարհի, պիտի բարձրանայ, իսկ ո՛վ որ բարձրանայ, պիտի խոնարհի:

Վարդան Վրդ. Թաշճեան



ՆՎԿԵՎԱՏԵՐԻ

- Մամա՛, ինչո՞ւ կու լաւ,- հարցուց տղեկ մը իր մօր:

- Քանի որ մայր եմ,- պատասխանեց ան:
- Չե՛մ հասկնար,- ըսաւ տղան:

Մայրը գրկեց զաւակը եւ ըսաւ. «Եւ երբեք պիտի չհասկնաս...»:

Ապա տղան հօրը հարցուց. «Ինչո՞ւ մաման միշտ կու լայ»:

- Բոլոր կիները առանց պատճառի կու լան,- եղաւ պատասխանը:

Պզտիկ տղան մեծցաւ, երիտասարդ եղաւ եւ դէռ կը զարմանար, թէ ինչո՞ւ կիները շատ կու լան...

Վերջապէս, օր մը, Աստուծոյ հեռաձայնեց, որ այս հանելուկը լուծէ.

- Տէ՛ր Աստուծոյ,- ըսաւ ան,- ինչո՞ւ կիները այդքան շուտով կու լան:

Հայր Աստուծոյ բացատրութիւնը այսպէս եղաւ.
- Երբ կիներ շինեցի, ուզեցի զայն յատուկ ընել:

Ուստի անոր ուսերը շատ զօրաւոր ըրի, որ աշխարհի բեռը կարենայ կրել եւ նոյն ատեն այդքան փափուկ, որ հանգիստ պարգեւէ: Ներքին զօրութիւն մը տուի անոր, որ ծննդաբերութեան ցաւերուն դիմանայ, նոյն ատեն, շատ անգամ զաւակներէն ստացած դրժուութեան տոկայ: Ամբողջութեամբ տուի անոր, որ առանց վիստելու յարատեւէ եւ ընտանիքին պէտքերը հոգայ: Նաեւ առանց գանգատելու, զաւակներուն հոգ տանի անոնց հիւանդութեան եւ տկարութեան պարագային: Կնկան զգայնութիւն մը տուի, որ տեսարար զաւակները սիրէ, նոյնիսկ երբ անոնք զինք վշտացնեն: Այս նոյն զգայնութիւնը կօզնէ, որ ձագուկին ցաւը համբոյրով մեղմացնէ եւ իր երեխաներուն վախերն ու նեղութիւնները փարատէ: Իրեն զօրութիւն տուած եմ, որ ամուսինին հանդուրժէ, երբ սխալներ գործէ, եւ զինք մարդուն կողոսկրէն շինեցի, որ անոր սիրտը պաշտպանէ: Անոր իմաստութիւն տուի գիտնալու, թէ լաւ ամուսին մը բնաւ դիտմամբ իր կիներ չի ցուցներ, սակայն երբե՛ս անոր հաւատարմութիւնը կուզէ փորձել եւ ստուգել, թէ առանց ընկրկելու իր կողքին կը կանգնի: Եւ վերջապէս, կին արարածին արցունք տուի, որ լայ, երբ պէտքը զգայ. այս է անոր միակ տկարութիւնը...

«Անոնք որ արցունքով կը ցանեն, ցնծութիւնով կը հնձեն: Ան որ լալով կերթայ, ցանելու սերմը տանելով, անշուշտ ցնծութիւնով ետ պիտի դառնայ, իր ցորենին խորձերը բերելով» (Մատթ. 126:5-6):

Հրսիս



ՄՈՒԲԵՐ ԵՒ ՄԵՍԵ

Սուրբ Նիկողայոս Զմիւռնեցի Սքանչելագործ Հայրապետ

Իւրաքանչիւր տարուան աւարտին կը պատրաստուինք նոր տարի մը դիմաւորելու եւ անոր հետ անհամբեր կը սպասենք բոլորին սիրելի Կաղանդ պապան (Santa Claus): Գիտէ՞ի՞ր, թէ Կաղանդ պապան Սուրբ Նիկողայոս Հայրապետն է: Ան ծնած է Դ. դարուն Փոքր Ասիա (այժմ Թուրքիա). փոքր տարիքին որբանալով ժառանգած է իր մեծահարուստ ընտանիքին հարստութիւնը: Սուրբ Նիկողայոս եղած է Զմիւռնիոյ Եպիկոպոսը եւ իր կեանքը ապրած է նշանաբան ունենալով Աւետարանի ճշմարտութիւնը. «Եթէ կ'ուզես կատարեալ ըլլալ, գնա՛, ինչ որ ունիս ծախէ եւ աղքատներուն տուր. այդպիսով երկինքի մեջ գանձ պիտի ունենաս, եւ յետոյ հետեւէ՛ ինձի» (Մտ 19.21):

Այսպէս ապրեցաւ Սուրբը՝ միշտ օգնելով աղքատներուն, կարօտեալներուն ու մանաւանդ գաղտնաբար նուէրներ տալով որբերուն: Զանգան պատմութիւններու կողքին կը պատմուի, թէ ինչպէ՛ս Ս. Նիկողայոս անգամ մը տան մը ծխնելոյզէն ոսկի կը նետէ օգնելու աղքատ ընտանիքի մը, եւ ոսկին կ'իյնայ ծխնելոյզին մօտ չորնալու համար կախուած գուլպային մեջ, որմէ կու գայ Կաղանդի յատուկ գուլպաներ կախելու սովորութիւնը:

Նիկողայոս մասնակցած է Նիկիոյ ժողովին եւ մահացած է տարի մը ետք՝ 326 թուականին: Հայ եկեղեցին սուրբին տօնը կը յիշատակէ երկու տարբեր առիթներով:

Գարեգին Վրդ. Շիրսուեան

ԺԵՍՈՒՂ

Ո՛վ Տէր, լսէ՛ աղաչանքս, երբ քեզ օգնութեան կը կանչեմ, ողորմէ՛ ինձի եւ պատասխան տուր: «Զիս փնտռեցէք», ըսիր դուն, եւ իմ սիրտս քեզի պատասխան տուաւ. «քեզ կը փնտռեմ, Տէ՛ր»:



ՆԻՍԱՒԻՌԻՉ

PRELATE'S MESSAGE



MESSAGE DU PRÉLAT

THE CHRISTIAN VIEW OF MAN

What is man? Who is man? Who is this being boasting of his conquests and victories, while still fearing himself? The Bible says that God created man. This biblical truth forces man to see that he is nothing without God. Alone, man resembles the grass of a meadow, the wind in the trees; he is only pain and suffering. Yes, man is a "dependent being." He depends upon God which is why he is always prepared to rebel against Him. This rebellious spirit brings man to the lowest layers of creation. It is only through the admission of his sins that he may elevate himself to divine heights.

The idea that man is the creation of God, that he is "made in His image," leads us to three fundamental points:

- a) God made himself humble by presenting his human nature.
b) God is "our Father."
c) Man has value only in relation to God.

This value of dependency forces man into a deeper knowledge of sin: he is responsible for the sins he commits, and his weakness must be a constant reminder of his dependence upon God. For the sinner, life is only sustainable through God's love. This love has been revealed in the very incarnation of Jesus Christ and dwells within each being. Thus, no one is condemned to death, in spite of their committed sins, since the son of God sacrificed himself, by His crucifixion, for the man who has gone astray.

Because of sins, the image of God has been dirtied in the mind of man, then with the crucifixion of Christ, it has been renewed and rebuilt.

Yes, MAN IS NOTHING WITHOUT GOD!

Archbishop Papken Tcharian
Prelate of Canada



MEDITATING ON THE LORD'S PRAYER

On one occasion, Jesus was asked by his disciples to them how to pray, and Jesus taught them the most beautiful and profound prayer, the Lord's Prayer (Matthew 6:9-13). Here's a meditative version of it. You are the Lord of lords and the King of kings, and yet you wanted us to call you OUR FATHER. You gave us your "address" and wanted us to rise above our daily routine and remember that you are IN HEAVEN.

May we learn to live in such a way, that everyone would see your goodness in us and would proclaim: HALLOWED BE YOUR NAME.

May you reign in our hearts and may the craving of our souls be that YOUR KINGDOM COME.

And, when the present doesn't make sense and the future remains unpredictable, may we learn to say: YOUR WILL BE DONE, so that we can lead a life, here ON EARTH AS IT IS IN HEAVEN.

Father, we are grateful always and acknowledge that you will GIVE US THIS DAY OUR DAILY BREAD, and that you will feed us physically and spiritually every day. And, as you FORGIVE US OUR DEBTS, through your mercy and grace, we will make sure that WE ALSO, HAVE FORGIVEN OUR DEBTORS.

Father, you know our weakness. Hence, when you see that we are facing something that might be difficult for us to resist, please DO NOT BRING US TO THE TIME OF TRIAL, but extend your powerful arm and RESCUE US FROM THE EVIL ONE.

FOR THE KINGDOM AND THE POWER AND THE GLORY ARE YOURS FOREVER. AMEN.

Fr. Koghart Kosbakian

L'HOMME, D'APRÈS LA CONCEPTION CHRÉTIENNE

Qu'est-ce l'homme? Qui est l'homme? Qui est cet être qui se vante tant ses conquêtes et ses victoires, tout en s'effrayant toujours de soi-même? La Bible dit que c'est Dieu qui créa l'homme. Cette parole biblique oblige donc l'homme à voir qu'il n'est rien sans Dieu.

Seul, l'homme ressemble à l'herbe d'un pré, au vent qui passe; il n'est que douleur et souffrances. Oui, l'homme est un « être dépendant ». Il dépend de Dieu et c'est pour cela qu'il est toujours prêt à se révolter contre Lui. C'est cet esprit rebelle qui amène l'homme aux plus basses couches de la création. C'est l'aveu de son péché qui monte l'homme aux hauteurs divines.

L'idée que l'homme est la création de Dieu, qu'il est « fait à Son image », nous mène vers trois points fondamentaux : Dieu s'est fait humble en présentant sa nature humaine.

Dieu est « notre Père ».

L'Homme n'a de valeur qu'en rapport à Dieu.

Cette valeur de dépendance force l'homme dans une connaissance plus profonde du péché : il est responsable des péchés qu'il commet, et sa faiblesse ne doit être qu'un rappel de sa dépendance à Dieu. Pour le pécheur, la vie n'est soutenable que par l'amour de Dieu. Cet amour s'est révélé en l'incarnation même de Jésus Christ et s'abrite à l'intérieur de chaque être. Ainsi, nul n'est condamné à la mortalité, malgré les péchés commis, puisque le fils de Dieu s'est sacrifié, par Sa crucifixion, pour l'homme qui s'est égaré.

À cause du péché, l'image de Dieu s'est salie dans l'esprit de l'homme, pour ensuite se renouveler et se rebâtir avec la crucifixion du Christ.

Oui, l'HOMME N'EST RIEN SANS DIEU !

Archevêque Papken Tcharian
Prélat du Canada

CHARITÉ

Qu'est-ce que la charité ? Dans son sens le plus général, la charité est l'amour désintéressé pour autrui. Ce sens est hérité de la théologie.

Mais dans un sens plus précis en rapport à l'action, la charité est l'acte de faire un don aux personnes les plus pauvres afin de les aider dans les difficultés de leur existence.

De fait, la charité n'est pas seulement une modalité de l'action. Elle est aussi sa fin. Son but est d'aider les plus démunis. Au contraire de la solidarité, la charité existe sur le plan de la morale. Elle peut être jugée en soi en vertu de la fin qu'elle réalise. Si aider son prochain est une vertu, alors la charité est une vertu.

Il faut bien faire attention au sens des mots. La « solidarité » n'a jamais signifié « aide aux plus démunis ». Cette définition est celle de la charité. Si vous trouvez cet acte vertueux, alors c'est que vous trouvez la charité vertueuse et non pas la solidarité. Si vous invoquez l'aide de vos congénères pour vous aider dans vos difficultés, alors ce n'est pas la solidarité que vous invoquez, c'est encore la charité !

Puisque la charité est un acte morale, elle n'a de sens que dans l'exercice de la liberté. Être contraint par autrui à agir selon les commandements d'une morale, ce n'est pas agir de façon morale. C'est simplement plier mécaniquement sous la force. L'action morale implique le choix entre le bien et le mal. La charité, comme tout acte moral, ne s'impose pas aux autres, elle résulte d'un libre choix.



ՃԱՆՉԱՆՔ

ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀԱՅՐԵՐԸ

ԺԻՄԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

Գրիգոր Տաթևացի

Գրիգոր Տաթևացի ծնած թվականն է 27 Դեկտեմբեր 1409-ին, Տաթև գիւղին մէջ:

Հայ Առաքելական Եկեղեցին զինք դասած է սուրբերու շարքին, եւ իր յիշատակը կը նշուի Մեծ Պահքի 4-րդ Կիրակիի նախընթաց Շաբաթ օրը:

Աստուածաբան է, փիլիսոփայ, եկեղեցական գործիչ, դասախօս, երաժիշտ, մանրակարիչ եւ ռաբունապետ: Գրիգոր Տաթևացին Տաթևի փիլիսոփայական դպրոցի նշանաւոր ներկայացուցիչներէն է, միջնադարեան հայ աստուածաբանական միտքի հսկայ դէմքերէն: Անոր անուան հետ կապուած է Տաթևի համալսարանը:

Աշակերտած է մեծ աստուածաբան եւ իմաստասէր Յովհան Ռոտունեցիի, որուն մահէն ետք գլխաւորած է Տաթևի եւ Ապրակունիսի բարձրագոյն դպրոցները, վարած է փիլիսոփայութեան, աստուածաբանութեան, քերականութեան, երաժշտութեան տեսութեան եւ այլ դասընթացներ: Դասախօսած է Մեծփավանքի եւ Մաղմուսավանքի դպրոցներուն մէջ: Միաժամանակ զբաղած է ազգային-եկեղեցական հարցերով, յատկապէս պաշտպանելով հայ եկեղեցոյ ինքնուրոյնութիւնը:

Տաթևացի գրած է մեկնութիւններ, էթիկաբերդ, Վրաստան, քարոզներ, աստուածաբանական, դասաբանական, իմաստասիրական մեծարժէք աշխատասիրութիւններ: Նաեւ «Գիրք հարցմանց» ու «Ոսկեփորիկ» հանրագիտական երկերը, որոնց մէջ ի մի բերուած են ոչ միայն ժամանակի գիտութեան եւ կեանքի ամենաբազմազան խնդիրներուն վերաբերող տեղեկութիւններ, այլեւ հայ դասաբանական մտքի դարաւոր ձեւերը: Իր տեսակին մէջ բացառիկ է նաեւ «Քարոզգիրքը», «Ձմեռան» եւ «Ամառան» հատորներով, որ եղած է քարոզախօսութեան եւ հոեւորական արուեստի դասագիրք:

Գրիգոր Տաթևացիի ժամանակակիցները մեծարած են զինք որպէս Եռամեծ Վարդապետ, Երկրորդ Լուսաւորիչ հայոց եւ Աստուածաբան, Սիւն եւ Ախոյեան հայ եկեղեցոյ, Վարժապետ Ամենայն Հայոց եւ այլ պատուանուններով:

Ինչպէ՞ս կարդալ Աստուածաշունչը

Քրիստոնեան ժամանակի ընթացքին ձեռք կը բերէ հոգեւոր հասունութեան հիմնարար քայլեր, որոնք կը կայանան հաւատքի կեանքը աներէր հիմքի վրայ չընելու աստուածաշնչական սկզբունքներու մէջ: «Պատուիրաններս պահէ, որ ապրիս»: Երբ կը մտածենք Աստուծոյ խոստումներուն մասին, այնպիսի հոգեւոր ուրախութիւն մը կ'ունենանք, ինչպէս նաեւ յաղթութիւն եւ գորութիւն, որոնք միայն Աստուծոյ խօսքը կը փոխանցեն:

Ինչպէ՞ս կարդալ Ս. Գիրքը: Աստուածաշունչը երբ հաւատքով կը կարդացուի, ամէն տեղ կը բացայայտուի անոր խորքային հոգեւոր արժէքները: Աստուածային ճանարտութիւնները լաւապէս հասկնալու համար անհրաժեշտ է զայն սերտել: Աստուածաշունչի ամէն մէկ նախադասութիւնը հնարաւորութիւն կ'ընձեռէ ճշգրտօրէն ապրելու: Նկատի ունենանք հետեւեալ թելադրութիւնները:-

- Սկսիլ սերտողութիւնը, վրստահելով որ Աստուած ինք կը ներշնչէ մեզ:
- Ուշադիր կարդալ աստուածաշնչական հատուածները եւ խորհրդածել նշուած մտածումներու եւ հարցերու շուրջ:
- Կարելիութեան սահմաններուն մէջ փորձել ամբողջական ու սպառիչ պատասխաններ տալ հարցերուն:
- Սկսիլ գործադրել զանոնք կեանքիդ մէջ:
- Անգամ մը եւս անդրադառնալ ընթերցումի նպատակին եւ մտածել, թէ արդեօք անիկա իրագործուած է: Իսկ եթէ ոչ, ապա ինչ պէտք է ընել:
- Սերտողութիւնը վերջացուր գոհաբանական աղօթքով եւ խնդրէ Աստուծմէ, որ օգնէ քեզի աճելու եւ զարգանալու այն բնագաւառներուն մէջ, որոնք ցոյց տրուեցան քեզի:

Աստուածաշունչին մէջ ամփոփուած ճշմարտութիւնները կ'օգնեն քեզի մտերիմ երկխօսութիւն մը ունենալու Յիսուս Քրիստոսի հետ եւ յայտնաբերելու Անոր խոստացած «Կատարեալ եւ լեցուն կեանքը» (Յի 10.10):

Այսպիսով, երբ գործադրել տուեալ սկզբունքները, առաւել խորութեանը կ'ընկալէք Քրիստոսի փառքին համար ապրելու եւ նուիրաբերելու նշանակութիւնը:

-Սկսիլ աղօթքով՝ Աստուծոյ ներկայութիւնը, օրհնութիւնը եւ իմաստութիւնը խնդրելով. «Իմաստութիւն Հօր Յիսուս, տո՛ւր ինձի իմաստութիւն» (Ներսէս Շնորհալի):

ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ

Յիսուս անոր ըսաւ.-
«Սիրէ՛ք բու (բ1) բու ամբողջ (է4), բու ամբողջ (դ2) ու բու ամբողջ (թ5)»:
Այս է մեծագոյն և կարևորագոյն (ե1): Երկրորդը ասոր նման է. «Սիրէ՛ (գ2) բու անձիդ պէս»:

ՆՊՐԵՉԱՆՈՒՄԻՆ

Շաբաթ, 4 Նոյեմբերին, Գանատայի Ազգային Առաջնորդարանին մէջ տեղի ունեցաւ Ազգային Առաջնորդարանի Քրիստոնէական Դաստիարակութեան Խորհուրդի կազմակերպած Կիրակնօրեայ դպրոցներու ուսուցչաց փօրեայ սեմինարը, Մոնթրէալի եւ Լաւալի մէջ գործող կիրակնօրեայ դպրոցներու ուսուցիչներուն համար:

Կիրակի, 12 Նոյեմբերին, Առաջնորդ Սրբազան Հօր կարգադրութեամբ, Գերապատիւ Տ. Գեղարդ Ծ. Վրդ. Քիւսպէկեան Սուրբ եւ Անմահ Պատարագ մատուցեց Ուինիփէկի աճող գաղութին մէջ, յատկապէս Ս. Վարդան Հայց. Առաքելական Եկեղեցոյ համայնքին համար:

Երեքշաբթի, 14 Նոյեմբերին, Բարզէն Արքեպիսկոպոս Ազգային Առաջնորդարանին ներս հիւրընկալեց բեմադրիչ Ջիւան Աւետիսեան, ընկերակցութեամբ Համազգային Մոնթրէալի «Մանահին» մասնաճիւղի ատենապետ Թամար Շահինեանի եւ Արմինէ Մուքոյեանի:

Շաբաթ, 25 Նոյեմբերին, Քինկաթընի մէջ տեղի ունեցաւ Գանատայի Հայոց Թեմի եկեղեցիներու Հոգաբարձութեանց եւ Ազգային Երեսփոխաններու փօրեայ Խորհրդածողովը: Օրուան գլխաւոր նիւթն էր «Նշումներ մեր ինքնութեան մասին սփիւռքեան ներկայ իրավիճակին մէջ»: Նիւթը ներկայացուց տոքթ. Վարդան Մատթէոսեան:

	1	2	3	4	5	6	7	8	9	10
ա	ս	շ	վ	ւ	ր	դ	ա	դ	ե	ս
բ	ս	է	ր	ւ	ս	ճ	ի	ւ	ժ	
գ	ե	ը	ս	ւ	ե	ր	ճ	դ	ի	
դ	ի	չ	ճ	ի	ճ	վ	դ	ս	ջ	
ե	դ	ւ	ճ	ճ	ի	ի	ր	ւ	ւ	ը
զ	ւ	ե	ժ	ւ	գ	ճ	ս	ճ	ւ	
է	ւ	գ	ի	ւ	ր	ճ	ճ	վ	դ	թ
ը	թ	փ	ճ	ր	ջ	ե	լ	ճ	ի	Յ
թ	փ	ւ	դ	ւ	ճ	թ	ճ	վ	դ	
ժ	ժ	ւ	ւ	ւ	ւ	ւ	ւ	գ	է	ճ

ԴԵԿՏԵՄԲԵՐ

Կիրակի	Երկուշաբթի	Երեքշաբթի	Չորեքշաբթի	Հինգշաբթի	Ուրբաթ	Շաբաթ
					1	2 Ս.Քարոյն եւ Ս.Քարոյնիւն
3	4	5	6	7	8	9
10	11	12	13	14	15	16 Ս.Յակոբ
17	18	19	20	21	22	23
24	25 Ս.Մուսայի	26 Ս.Պարտուկ	27	28	29	30
31						

ՀՈԳԵԻՐ ԽՕՍՔ

Յիսուս ըսաւ. «Ե՛ս եմ յարութիւնը եւ կեանքը: Ան որ ինձի կը հաւատայ, թէպէտեւ մեռնի, պիտի ապրի: Իսկ ան որ ողջ է եւ ինձի կը հաւատայ, երբեք պիտի չմեռնի»:
 Յովհ. 11:25-26

